*Թուականիս Հայոց ՉԾԳ էր․ ի թագաւորութեանն Հաոց մեծաց երից երանեալ և խաղաղնագգեաց ձգնաւոր կրաւնաւորին մեծին Հեթմո․․․»։*

*Նկարուած է 32ա․, բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։*

**120**․ *Մատ․ Ս․ Էջմ․ Դ․ № 187/2520, ժողովածու մեկնութեանց Յովհաննու աւետարանչի (Ստեփաննոսի Սիւնեաց, Նոնայի, Անդրէի և Արեթաս եպիսկոպոսաց Կեսարու Կապադովկիոյ),* Թուղթ․ *16½×12 սմ․, թերթ 344։* ԳԻՐ, *Ընտիր բոլորգիր, միջեան 13×9 սմ․ ։ ԳՐԻՉ և ՍՏԱՑՈՂ․ Յովհաննէս վարդապետ Երզնկացի նշանաւոր մատենագիրը։ ԺԱՄԱՆԱԿ․ 1306 թ․ Փրկչական «Դրեցաւ ի թ՟ւ ՉԾԵ, ի քաղն և յՆՆ մարտի ամսոյ»։*

*Նկարուած է 344ա․ բնագիրը 13½×9½× սմ․, մեր նկարը 12×8½ սմ․, քիչ փոքր բնագրից։ Նկարուած երեսում նորոգուած են յետին գրչով․ ա) տող—ող, մա․ բ) տող—հաճ․ գ) տող—գակ՞դ) տող—Տ՟են․ ե) տող—ս, վերջին տողում—ւ ի բիւ»։*

**121**․ *Մատ․ Երուս․ Ս․ Յակ․ № 2566/11․ Աւետարան, պատկերազարդ, կազմը արծաթապատ, Տախտ․ ՁԱ․ պատկերաւոր, 27×19,7 սմ․ ։* Մագաղաթ *ընտիր։ ԳԻՐ․ բոլորգիր, երկսիւեան 18,8×5 սմ․ ։ ԳՐԻՉ․ Գրիգոր քահանայ, որի հօրեղբայրն է Գրիգոր արեղայ, կնոջ անունը Հեղինէ։ Նկարիչ․ Սարգիս (քահանայ, որդի Գրչին), որ «չառ նկարեաց սա յայս գրի»։ ՍՏԱՑՈՂ՝ պիտի լինէր «(Ստեփ)աննոս մականուն Սերաստացի» քահանան, բայց ջնջուած է չակերտների մէջ առնուածը։ Գրչի տարբեր թանաքով գրած մի երկրորդ յիշատակարանից երևում է, որ մտադիր էր ինքն անձամբ յիշատակ տանել Երուսաղէմ «ի ս՟ր Յակոբ և վ՟ն բազում մեղաց իմոց ոչ կատարեր խորհուրդ սրտի իմոյ»․․․ Թուղթ ընկած լինելու պատճառով յայտնի չէ, ինքն է Երուսաղէմ տարել, թէ ուղարկել է։ Ուրեմն անյայտ պատճառով Ստեփաննոս քահանայ Սերաստացին այլ ևս չէ ստացել։ ՏԵՂ․ Գրուած է «ի յարկի և հովան(ե)աւ սուրբ Նշանի»?։ ԺԱՄԱՆԱԿ․ 1307 թ․ փրկչական․ [ Յ ] ամի եւթն հարիւրորդի յիսներորդի թուականիս զարմիս Հայկայ, ի թագաւորութե՟ աշխարհիս Կիլիկիոյ (այսպէս) Լեւոնի, որ ի սոյն ամի ածաւ, որդւոյ պարոնին Թորոսի, որդւոյ արքային Լեոնի, և ի վախճանել տեառն կաթուղիկոսի (Անաւարզեցւոյ) ի Քրիստոս»։*

*Նկարուած է վերջին յիշատակարանը․ բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։*

**122**․ *Մատ․ Ս․ Էջմ․ Գ շար․ № 933/2930․ Աւետարան, նկարազարդ,* թուղթ, *31,3×24, թերթ 249։ ԳԻՐ․ Արևելեան բոլորգիր իւրատեսակ գեղեցկութեամբ, երկաթագրի հետքերով, երկսիւեան 26×15 ներքևի ծանօթութիւնների հետ։ ԳՐԻՉ․ Թոմա․ «ի դասէ քահանայական կարգէ», որի ուսուցիչն է Սարգիս վարդապետ և ծնողքը Վիրապշահ և Թագուհի (այսպէս)։ ՏԵՂ․ Ընդ հովանեաւ ս՟ր Գրիգորիս և ս՟ր Սարգսիս (Սիւնեաց նահանգում)։ ԺԱՄԱՆԱԿ․ 1315 թ․ Փրկչական․ «Ի թուականութեանն Հայոց ՉԿԴ (յամսեանն) յարեգ ԺԲ, յաւուր երկուշաբթի, Ժ․ ժամու, հայրապետութեանն Տ՟ր Յովաննէս Աւրպէլի»։*

*Նկարուած է 127բ․, բնագիրը 14×15 սմ․, մեր նկարը 8½×9 սմ․ ։*